ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 24.11.2017 թ. թիվ 8 նիստում:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի նախագահ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ

ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ
_____2017թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՈՒսանողական խորհրդի կրթության որակի ապահովման հանձնաժողովը ՀՀ ոստիկանության կրթահամալիր (այսուհետ՝ Կրթահամալիր) ուսանողական խորհրդին կից գործող խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է 1 տարի ժամանակով:
2. Հանձնաժողովը կազմված է նախագահից և 8 անդամներից:
3. Հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները ընտրվում են ուսանողական խորհրդի կողմից:
4. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի կրթության որակի ապահովման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հիմնական նպատակն է ազգային և միջազգային կրթական ծրագրերին ինտեգրման և կրթական գործընթացի որակի անընդհատ բարձրացման ճանապարհով ապահովել սովորողների մասնակցությունը կրթական գործունեության համակարգի որակի ապահովման, կրթական ծառայությունների և ծրագրերի կատարելագործման, մասնագետների արդյունավետ պատրաստման գործընթացներին:
5. Հանձնաժովողը իր նպատակից բխող գործունեությունն իրականացնում է համապատասխան աշխատանքային պլանի համաձայն, որը կազմվում ու քննարկվում է ուսանողական խորհրդում և հաստատվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիր պետի կողմից:
6. Հանձնաժողովի նիստերը վավեր են անդամների առնվազն 2/3 –ի մասնակցությամբ: Հանձնաժողովը որոշում ընդունում է մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է ուսանողական խորհրդի նախագահի ձայնը:

II . ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ և ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) Կրթահամալիրում կրթական գործունեության վերլուծություն, գերակա ուղղությունների առանձնացում, վերը նշված գործընթացների զարգացմանն ու կատարելագործմանը ուղղված ուսանողական կարծիքի արտահայտում,

2) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կողմից մասնագետների պատրաստման գործընթացների, մատուցվող ծառայությունների որակի մշտադիտարկում:

8. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) Ուսումնական գործունեությանն առնչվող հարցերի բարձրաձայնում Կրթահամալիրի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների շրջանում,

2) Կրթահամալիրի սովորողների և աշխատակիցների ներգրավում կրթության որակի բարելավման գործում,

3) կրթության որակի բարելավման նպատակով ստեղծված մարմիններում, հանձնաժողովներում սովորողների թեկնածությունների առաջադրում,

4) Կրթահամալիրի կրթական գործընթացի որակի պատասխանատու անձանց և ստորաբաժանումներին (հանձնաժողովներին, խմբերին) որակի մշտադիտարկման արդյուքների ներկայացում և վերջիններիս աշխատանքներին մասնակցություն,

5) Հանձնաժողովին հասցեագրված, կրթահամալիրում կրթության որակի ապահովման ոլորտին վերաբերվող նամակների, դիմումների, բողոքների վերլուծություն,

6) Հանձնաժողովի կողմից կրթության որակի բարելացմանն ուղղված միջոցառումների անցկացում և արդյունքների վերլուծություն,
7) Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրության և Կրթահամալիրի ներքին իրավական ակտերի հիման վրա:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հանձնաժողովի նախագահի լիազորություններն են՝

1) Հանձնաժողովի ընդհանուր գործունեության համակարգում՝ համաձայն հաստատված պլանի,
2) Հանձնաժվողի նիստերի գումարում,
3) Հանձնաժողովի ընդունած որոշումների հաստատում և հաշվետվությունների ներկայացում,
4) Հանձնաժողովի նիստերի ժամանակ արձանագրություն կազմելու նպատակով քարտուղարի նշանակում:

10. Հանձնաժողովի անդամի լիազորությունները՝

1) Ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ,
2) Հանձնաժողովի որոշմամբ մասնակցել 8-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված աշխատանքներին: